

տեսարանը, Շահի փլաւ ուտելը, մանաւանդ այն, թէ պարսիկը անկողին պառկելիս կնոջ որ կողմովն է մտնում նրա ծոցը, ևս առաւել հարեմական կանանց տկլորութեան և անփոխանութեան» մասին հեղինակի շեշտը: Այս տեսակ տեսարանների նկարագրութիւններ կարելի է կարդալ միան անժամանակ, երբ նկարագրողը զեղարուեստական վրձին է, Խակ պ. Շահրիարի չորս թէ աւելի տակից նրանք դուրս են եկել վերին աստիճանի հակագեղարուեստական և տգեղ:

Ընդհանրապէս առմամբ «Ձուղդ-Քուշանը» լրագրական լողուածների ժողովածուի տպաւորութիւն է գործում: Հեղինակը աւելի խելացի վարուած կը լինէր եթէ իւր զրքուկը համատարար անոււանէր «Տեսարաններ Պարոկաստանի կեանքից» և ոչ վէպ, որ մնձ լաւակնութիւն է նրա կողմից, վէպ դրելու համար բնածին շնորհք է հարկաւոր, իսկ այս շնորհքը փողոցում չի ծախւում:

Շահրիարի ոճը վատ չէ. բայց իրեն լրագրական լողուածաղրի օճ և ոչ վիպասանի: Գրքուկը լիքն է պարսկերէն և թուրքերէն բառերով, որոնք ձանձրովթ են պատճառում ընթերցողին:

Գրքուկի զինը մի ոռութիւնն է,

—

«ՏԱՆՑԻՐՈՒՁՄ ԱՂՋԻԿԸ, ՎԻԱԼԱԿ ՆԱՐ-ԴՈՍԻ, ՆՐԱՄ.

Լիսի: Թիֆլիս, 1902 Գինն է 20 կոպ:

Մի հակ վարժապետ սենեակ է վարձում մի կապալաւոր թիֆլսեցի հակ վաճառականի մօտ: Շուտով նա ծանօթանում է տանտիրոջ ընտանիքի հետ և հրաւիրուում դասատու նրա որդու համար: Վարժապետը եղօրից անցնում է քրոջը և սկսում է նրան էլ հալերէն լիզուի և պատմութեան դասեր տալ: Օրիորդ Քալճն, որ զիմնազիական կրթութիւն ունի, մեր վարժապետին լավշտակում է իւր ակրակ շարժումներով, կրակ քալուածքով և կրակ խօսակցութեամբ: Նաև արեւելսան գեղեցկութեան ուրուն տիպարով, պինդ գեղձի նման թուխ ու թառուտ դէմքով, բեխերով և զարմանալի առատ ու երկան մազերով: Վարժապետը խելքը կորցնում է և սիրահարւում: Աղջկակ ծնողներն ալդ հասկանում են և սուաջարկում նրան

հեռանալ իրանց տնից, Վարժապետը սկսում է տանջուել, Մի օր նրանք պատահաբար հանդիպում են Մուշտակիդում։ Տեղի է ունենում բացատրութիւն, որից երևում է, թէ Քալօն թէն սիրում է վարժապետին, բայց անզօր է կոռուբու ծնողների կամքի դէմ Վարժապետը կատաղում է և ձեռն ուժգին զարկում սեղանին Զօսնող ամրոխը նկատում է ալր, Օրիորդի բժիշկ եղբաբը, որ նստած է լինում մի ուրիշ սեղանի քով, նկատում է սկանդալը և քիչ է մնում վարժապետին ծեծի...

Սիրահարները բաժանուում են Քալօն ամուսնանում է մի հարուստ գինելվածուի հետ, Վեց տարի լետոյ վարժապետը հանդիպում է նրան փողոցում։ Քալօն զերացել է, աղեղացել և ի վերայ ալսր թասակրաւ է հաղել և դնում է զրբացի մօտ, մի խօսքով դարձել է Թիֆլոսի տափակ Կէկէլներից մէկը, Վարժապետը, ի հարկէ, հիսամթափելում է և սոռանում Քալօին։

Այս է Նար-Դոսի 90 էջերից բաղկացած վէսլիկի բովանդակութիւնը, որ, ինչպէս տեսաւ ընթերցողը, աւելի քան հասարակ է, Վէսլիկը գեղարուեստական հրապուր չունի, բայց կարդացւում է, իսկ ալս՝ քիչ բան չէ, Հեղինակի ոճը զերծ է դռնեկարանութիւնից, բաւական դրականական է, միայն ափսոս պատկերաւոր չէ։ Նկարազրութիւնները աղդու չեն, հեղինակի վրձինը հարուստ երանգներից զուրկ է, չունի նաև զեղեցիկ համեմատութիւններ։ Դալով հեղինակի դիտողական ընդունակութեանը, մակերնոլթեական է, կան դարձուաներ որոնք տարակուսանքի ժայիտ են շարժում, օրինակ «և խելքի ծալը զնում էր քնելու համար» (Եջ 23)։ Տգեղ է հերոսունու կեցոտ եղունգների նկարազրութիւնը։ Սիրու արտակատութիւնը երկու սիրահարների մէջ նկարազրուած է տարօրինակ։ Ակապէս, օրինակ, մի տեղ հերոսը, որի լեզուից պատմեում է անցքը, իւր նկարազրութեանը աշխոթ տալու համար ասում է «երբեմն նա (սիրուհին) ուզգակի բռնում է քթից ս, ես քաշում է ի նրա գիսակը» և ալլն։

Մի թեթև նկատողութիւնն ըստ երեղիթին պ. Նար-Դոսը վիրատեաց է, նա մի քանի տեղ ծաղրում է վրաց լեզուն, զարրանալով, որ իւր հերոսուհին ալր լեզուով է խօսում։ «Վիրական զզուելի հնչիւն, անիծած վրացերէնով», ալս ալնապիսի անզգուշ խօսքեր են, որոնց համար հեղինակը կարող է ենթարկուել բարուական տուգանքի։ Խնչ կարիք կալ օտարների լեզուն ծաղրելու։